



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՄԵԼՏԵՔՍ ՍՊԸ-Ն ԵՎ ՄԵՍՐՈՊ ՄՈՎԱՏԵՍՅԱՆՆ
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 32283/04)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

17 հունիս 2008

ՈՒՇԻ ՄԵՁ Է ՄՏԵԼ

17/09/2008

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Մելտեքս ՄՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Elisabet Fura-Sandström,

Boštjan M. Zupančič,

Alvina Gyulumyan,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Ann Power, *դատավորներ,*

և Santiago Quesada -*Բաժանմունքի քարտուղար,*

2008թ. մայիսի 27-ին կայացած դռնփակ նիստում,

Կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2004թ. օգոստոսի 27-ին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն «Մելտեքս» ՄՊԸ-ի («Դիմումատու ընկերություն») և վերջինիս նախագահ պրն. Մեսրոպ Մովսեսյանի («Երկրորդ դիմումատու») կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 32283/04 գանգատի առնչությամբ:

2. Դիմումատու ընկերությունը և երկրորդ դիմումատուն (միասին՝ «դիմումատուներ») ներկայացված են Լոնդոնում գործող Մարդու Իրավունքների Քրդական Ծրագրի (KHRP) փաստաբաններ պրն. Մ. Մյուլլերի, պրն. Թ. Օթթիի, պրն. Ք. Յիդիզի, տկն. Ա. Սթոքի և տկն. Լ. Քլարիջի և Երևանում գործող փաստաբաններ պրն. Տ. Տեր-Եսայանի, տկն. Ն. Գասպարյանի և պրն. Ա. Ղազարյանի կողմից: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2006թ. հունիսի 15-ին Դատարանը որոշեց գանգատը ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Դատարանը որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Գիմումատու ընկերությունը հիմնադրվել է 1995թ.և գրանցված է Երևանում: Երկրորդ դիմումատուն ծնվել է 1950թ. և ապրում է Երևանում:

Ա. Գործի նախապատմությունը

1. Գիմումատուների ներգրավվածությունը հեռուստատեսային հեռարձակման մեջ

5. Երկրորդ դիմումատուն առաջին անգամ ներգրավվել է հեռուստատեսային հեռարձակման մեջ 1991թ. հունվարին, երբ նա հիմնադրել է «Ա1+» հեռուստաընկերությունը՝ Հայաստանի առաջին անկախ հեռուստաընկերությունը: Ի սկզբանե «Ա1+»-ը գործում էր որպես լուրեր և տեղեկատվություն հավաքող, թողարկող և տարածող: Տեղեկատվությունը հավաքվում և տարածվում էր Հայաստանի բոլոր մարզերում, ինչպես նաև արբանյակային կապով հեռարձակվող արտասահմանյան հեռուստաընկերություններով:

6. 1994 թ. «Ա1+»-ը ստացել է պետական հեռուստատեսության արտոնագիր ունեցող հաճախականություն, որով այն հեռարձակվել է սահմանված ժամանակահատվածում: Համաձայն երկրորդ դիմումատուի 1995թ. «Ա1+»-ն ունեցել է բարդություններ պետության հետ հարաբերություններում կապված իր հեռարձակման հետ. ամեն օր ստացվում էին հեռախոսային զանգեր պաշտոնատար անձանց կողմից, որոնք պարունակում էին «Ա1+» ընկերությանն իրեն տրամադրված հեռարձակման ժամերից զրկելու սպառնալիք և քննադատություն «Ա1+»-ի այն հաղորդումների վերաբերյալ, որոնք դիտվում էին պետական քաղաքականության դեմ ուղղված: «Ա1+»-ը տեղեկացվեց, որ հեռարձակման հաճախականությունը պետության կողմից տրամադրվել է, որպեսզի պաշտպանվեն և առաջ մղվեն պետական շահերը, այլ ոչ թե քննադատվեն պետական իշխանությունները: Նախագահական ընտրությունների ընթացքում «Ա1+»-ը հրաժարվեց հեռարձակել միայն իշխանամետ նյութեր: Դրա հետևանքով նրա պետական հեռարձակման գործունեությունը կասեցվեց 1995 թ. մայիսին:

7. 1995թ. երկրորդ դիմումատուն հիմնադրում և գրանցում է դիմումատու ընկերությունը: Գիմումատու ընկերությունը հիմնվեց որպես անկախ հեռարձակող ընկերություն, որի վրա պետական վերահսկողությունը չէր տարածվում: Ավելի ուշ երկրորդ դիմումատուն ստեղծեց «Ա1+» հեռուստաընկերությունը դիմումատու ընկերության կազմում: Հեռարձակմանը նախապատրաստվելու նպատակով 1996թ. հունվարի 1-ին դիմումատու ընկերությունը բացում է դպրոց անձնակազմ նախապատրաստելու նպատակով, ինչպիսիք են օրինակ՝ լրագրողներ, օպերատորներ, տեխնիկներ, որոնք այնուհետև աշխատանքի ընդունվեցին դիմումատու ընկերության և այլ հեռուստաընկերությունների կողմից: 1996թ. օգոստոսի 25-ին

դիմումատու ընկերությունը սկսեց հեռարձակումը Մոսկովյան «REN» TV ռուսական հեռուստաընկերության հետ համատեղ օգտագործելով տեխնիկական կարողությունները և արտադրանքը: Ժամանակի ընթացքում դիմումատու ընկերությունը էականորեն ավելացրեց իր կողմից արտադրված արտադրանքի ծավալը:

8. 1997թ. հունվարի 22-ին դիմումատու ընկերությանը ՀՀ կապի նախարարության կողմից շնորհվեց արտոնագիր, որով թույլատրվեց Երևանում տեղադրել հեռուստահաղորդիչ և իր «Ա1+» հեռուստաալիքի միջոցով հեռարձակվել դեցիմետրային ալիքի կապուղիով: Արտոնագիրը շնորհվեց հինգ տարի ժամկետով:

9. 1999թ. սեպտեմբերին դիմումատու ընկերությունը հիմնեց շուրջօրյա հեռարձակմամբ ինը մասնավոր արտոնագրված մարզային ընկերությունների «Համասփյուռ» ցանցը: Դիմումատուների պնդմամբ հեռուստատեսության այս ցանցը լայնորեն ճանաչված էր որպես Հայաստանում գործող մի քանի անկախ հեռուստատեսային հեռարձակողներից մեկը: Առաջնային ուշադրություն էր դարձվում անկախ, լավ մշակված լրատվական տեղեկատվություն տարածելուն և վերլուծությանը: Հեռարձակումների բովանդակությունը ներառում էր միջազգային և ներպետական լուրերի վերլուծություններ (30%), գովազդ (32%) և զանազան ժամանցային ծրագրեր:

2. Օրենսդրական փոփոխությունները և դրանցից բխող ժամանակավոր միջոցառումները

10. 2000-2001թթ.. փոփոխություններ կատարվեցին հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման բնագավառում: 2000թ. հոկտեմբերին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ստեղծվեց մի նոր մարմին՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ ՀՌԱՀ), որին վերապահվեց մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեության արտոնագրման և վերահսկողության իրականացման գործառույթը: ՀՌԱՀ-ը պետական մարմին էր բաղկացած ինը անդամից, որոնց նշանակում էր Հայաստանի Հանրապետության նախագահը: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը նաև սահմանում էր արտոնագրման նոր կարգ, որի համաձայն հեռարձակման արտոնագիր տրվում էր ՀՌԱՀ-ի կողմից անցկացվող մրցույթի միջոցով ազատ կապուղիների ցուցակին համապատասխան:

11. 2001թ. ընթացքում գոյություն ունեցող բոլոր արտոնագրերը ժամանակավորապես գրանցվեցին ՀՌԱՀ-ի կողմից մինչև համապատասխան մրցույթների հայտարարումը:

12. 2001թ. սեպտեմբերի 3-ին ՀՌԱՀ-ը դիմումատու ընկերության արտոնագիրը փոխարինեց նոր արտոնագրով: Նոր արտոնագիր տրվեց 37-րդ կապուղու հեռարձակման համար, որի ժամկետը լրանում էր 2002թ. հունվարի 22-ին:

13. 2001թ. նոյեմբերի 23-ին ՀՌԱՀ-ը որոշեց հետաձգել 37-րդ կապուղու համար հայտարարվող մրցույթը մինչև համապատասխան կանոնակարգի ընդունումը և թույլատրել դիմումատու ընկերությանը շարունակել անորոշ ժամկետով օգտագործել 37-րդ կապուղին մինչև մրցույթ հայտարարելը:

14. 2001թ. դեկտեմբերի 28-ին ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը (այսուհետ՝ «ՀՌԱՀ-ի կանոնակարգ»):

15. 2002թ. հունվարի 24-ին ՀՌԱՀ-ն ընդունեց N 4 որոշումը, որով հաստատվում էր Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը (այսուհետ՝ «Մրցույթի կարգ»):

3. 37-րդ կապուղու համար հայտարարված մրցույթը և դրա արդյունքները

16. 2002թ. փետրվարի 19-ին ՀՌԱՀ-ը մրցույթ հայտարարեց տարբեր հեռարձակվող հաճախականությունների, այդ թվում՝ 37-րդ կապուղու համար:

17. Դիմումատու ընկերությունը և երկու այլ ընկերություններ՝ «Շարմ» ՍՊԸ-ն և «Դոֆին Թի Վի» ՍՊԸ-ն հայտ են ներկայացնում 37-րդ կապուղու համար: Դիմումատու ընկերությունը պնդում էր, որ «Շարմ» ՍՊԸ-ն նախկինում երբեք չի աշխատել հեռուստատեսային հեռարձակման ոլորտում և նրա աշխատանքը հիմնականում կենտրոնացած է եղել երիտասարդների և ուսանողների համար ժամանցային ծրագրեր կազմակերպելու վրա: Հեռարձակման համար հայտի ներկայացման պահին նրա աշխատակիցներից որևէ մեկը չունեի լրագրողի մասնագիտական փորձ և ընկերությունը չունեի շենք, սարքավորումներ կամ ֆինանսական կամ տեխնիկական ենթակառուցվածք հեռարձակումը սկսելու համար: Դիմումատու կազմակերպությունը նաև պնդում էր, որ «Դոֆին Թի Վի» ՍՊԸ-ն գրանցվել է մրցույթի գործընթացը սկսվելուց առաջ մեկ ամսից էլ պակաս ժամանակ և դրանից առաջ հեռարձակման ոլորտում չի ունեցել որևէ փորձ:

18. 2002թ. ապրիլի 1-ին՝ մինչև մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված ընկերությանը հայտարարելը, դիմումատու ընկերությունը ՀՀ տնտեսական դատարան հայց է ներկայացնում ՀՌԱՀ-ի դեմ՝ բողոքելով, որ մրցույթ հայտարարելիս ՀՌԱՀ-ը խախտել է օրենքի մի շարք դրույթներ:

19. 2002թ. ապրիլի 2-ին ՀՌԱՀ-ն անցկացրեց վարկանիշային քվեարկություն և ճանաչեց «Շարմ» ՍՊԸ-ին 37-րդ կապուղու համար հայտարարված մրցույթի հաղթող:

20. 2002թ. ապրիլի 3-ին «Ա1+» հեռուստաալիքը դադարեց հեռարձակվել:

21. 2002թ. ապրիլի 16-ին դիմումատու ընկերությունը ևս մեկ հայց է ներկայացնում ՀՀ տնտեսական դատարան՝ պահանջելով, *inter alia*, չեղյալ հայտարարել 2002թ. ապրիլի 2-ի որոշումը:

22. 2002թ. ապրիլի 25-ին ՀՀ տնտեսական դատարանը մերժում է դիմումատու ընկերության հայցը:

23. Չնշված պահի դիմումատու ընկերությունն իրավունքի խախտման հիմքով բողոք է ներկայացնում Վճռաբեկ դատարան:

24. 2002թ. հունիսի 14-ին Վճռաբեկ դատարանը մերժում է բողոքը: Այդ վարույթները Դատարանի կողմից առանձին քննության են առնվել թիվ 37780/02 գանգատի շրջանակներում:

25. Ըստ դիմումատուների «Շարմ» ՍՊԸ-ն հեռարձակման փորձի և բավարար միջոցների բացակայության պատճառով այդպես էլ չսկսեց հեռարձակումը և ինն ամիս անց վաճառեց ընկերության բաժնեմասերի վերահսկիչ փաթեթը այլ իրավաբանական անձի:

Բ. 25-րդ կապուղու, 31-րդ, 39-րդ և 51-րդ կապուղիների, 3-րդ և 63-րդ կապուղիների և 56-րդ կապուղու մրցույթները

1. 25-րդ կապուղու համար մրցույթը

26. 2003թ. մայիսի 27-ին ՀՌԱՀ-ը հայտարարում է մրցույթ 25-րդ կապուղու համար: Դիմումատու ընկերությունը և մեկ այլ ընկերություն՝ Արմենիա Թի Վի-ին, ներկայացնում են առաջարկներ:

27. Մրցույթը կայանում է 2003թ. հունիսի 7-ին: Մրցույթի մասնակիցներից յուրաքանչյուրին տրամադրվում է 30 րոպե, որպեսզի ներկայացնեն իրենց առաջարկը և ևս 15 րոպե հատկացվում է յուրաքանչյուրին ՀՌԱՀ-ի հարցերին պատասխանելու համար:

28. 2003թ. հունիսի 11-ին ՀՌԱՀ-ն անցկացնում է վարկանիշային քվեարկություն և որպես մրցույթի հաղթող ճանաչվում է Արմենիա Թի Վի հեռուստաընկերությունը: Որոշման պատճենը ուղարկվում է դիմումատու ընկերությանը 2003թ. հունիսի 12-ին: Այն սահմանում էր՝

«Ղեկավարվելով «Հեռուստատեսության և Ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 50-րդ հոդվածների, «ՀՌԱՀ-ի կանոնակարգի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 31-րդ և 63-րդ հոդվածների և «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը հաստատելու մասին» ՀՌԱՀ 24.01.2002թ. թիվ 4 որոշման 19-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Երևան քաղաքի տարածքում 25-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի արդյունքները, ՀՌԱՀ-ը որոշում է (1)Արմենիա Թի-Վի ՓԲ ընկերությանը ճանաչել Երևան քաղաքի տարածքում 25-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող, (2) Արմենիա Թի-Վի ՓԲ Ընկերությանը տալ հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա:»

29. 2003թ. հունիսի 24-ին երկրորդ դիմումատուն նամակ է ուղարկում ՀՌԱՀ-ի նախագահին՝ վերջինիս խնդրելով պատճառաբանել իր հայտի մերժումը:

30. 2003թ. հուլիսի 1-ի նամակով ՀՌԱՀ-ը տեղեկացնում է երկրորդ դիմումատուին, որ՝

«... մրցութային կարգով լիցենզիա հատկացնելիս [ՀՌԱՀ-ը] որոշում է ընդունում միայն ընտրված ... կազմակերպությանը հաղթող ճանաչելու և հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա տալու կամ լիցենզիա տալը մերժելու մասին: [Գիմումատու ընկերությունը] 25-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցութում լավագույն կազմակերպություն չի ընտրվել:»

2. 31-րդ, 39-րդ և 51-րդ կապուղիների համար մրցութները

31. 2002թ. հոկտեմբերի 15-ին ՀՌԱՀ-ը հայտարարում է 5 այլ կապուղիների նոր մրցութ:

32. Գիմումատու ընկերությունը հայտ է ներկայացնում 5 կապուղիներից 3-ի՝ մասնավորապես 31-րդ, 39-րդ և 51-րդ կապուղիների համար:

33. 2002թ. նոյեմբերի 18-ին մրցութային գործընթացը կասեցվում է մրցութի մի քանի այլ մասնակիցների կողմից ՀՌԱՀ-ի դեմ հարուցված դատական վարույթների հետ կապված:

34. 2003թ. հուլիսի 18-ին ՀՌԱՀ-ն անցկացնում է վարկանիշային քվեարկություն և ճանաչում մրցութի հաղթողներին. 31-րդ կապուղին փոխանցվում է ԱրմենԱկոբ ԹիՎի-ին, 39-րդ կապուղին՝ ԹիՎի 5-ին և 51-րդ կապուղին՝ Երևան ԹիՎի-ին: ՀՌԱՀ-ի որոշումները բառացիորեն նույնական էին 2003թ. հունիսի 11-ի որոշման հետ: Այս որոշումների պատճեններն ուղարկվում են են դիմումատու ընկերությանը 2003թ. հուլիսի 19-ին:

35. Չնշված պահի երկրորդ դիմումատուն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն նամակ է ուղարկում ՀՌԱՀ-ի նախագահին՝ վերջինիցս խնդրելով իրեն տեղեկացնել արտոնագրի մերժման պատճառների մասին: Երկրորդ դիմումատուն նաև խնդրում է ՀՌԱՀ-ին որոշում կայացնել արտոնագրի տրամադրելը մերժելու մասին դիմումատու ընկերության ներկայացրած հայտը քննության արդյունքների համաձայն, ինչպես սահմանված է «ՀՌԱՀ-ի կանոնակարգ» ՀՀ օրենքի 63-րդ և 67-րդ հոդվածներով: Նա այնուհետև ՀՌԱՀ-ից պահանջում է իրեն տրամադրել դիմումատու ընկերության հայտի քննության արդյունքները, դրա լուսնների արձանագրությունը և անդամների առանձին կարծիքները:

36. Մեկ այլ նամակում երկրորդ դիմումատուն խնդրում է ՀՌԱՀ-ի նախագահին տալ այն ընկերությունների կողմից ներկայացված հայտերի պատճենները, որոնք հաղթել են 25-րդ, 31-րդ, 39-րդ և 51-րդ կապուղիների մրցութներում:

37. Երկրորդ դիմումատուի նամակին ՀՌԱՀ-ը պատասխանում է երկու նամակներով՝ երկուսն էլ կազմված 2003թ. օգոստոսի 11-ին, որոնք բովանդակությամբ նույնական էին իր՝ 2003թ. հուլիսի 1-ի նամակի հետ: Նամակներում ավելացվում էր, որ երկրորդ դիմումատուն կարող է ծանոթանալ լուսմների արձանագրության հետ և համապատասխան հայտերի հետ ՀՌԱՀ-ի գրասենյակում, որտեղ նա կարող է նաև պատճենահանել համապատասխան հայտերն իր սեփական տեխնիկական միջոցներով:

3. 3-րդ և 63-րդ կապուղիների մրցույթները

38. Չնշված պահի ՀՌԱՀ-ը հայտարարում է մրցույթ 3-րդ և 63-րդ կապուղիների համար:

39. Դիմումատու ընկերությունը և երկու այլ ընկերություններ՝ «ԱՐ ԹիՎի»-ն և «Սինեմաքսը», ներկայացնում են հայտեր վերոհիշյալ երկու կապուղիների համար:

40. 2003թ. հոկտեմբերի 13-ին ՀՌԱՀ-ն անցկացնում է վարկանիշային քվեարկություն և ընտրում է հաղթողներին. 3-րդ կապուղին հատկացվում է «ԱՐ ԹիՎի»-ին, իսկ 63-րդ կապուղին Սինեմաքսին: ՀՌԱՀ-ի որոշումներն իրենց բովանդակությամբ բառացիորեն կրկնում էին նախկին որոշումները: Այս որոշումների պատճեններն ուղարկվում են դիմումատու ընկերությանը 2003թ. հոկտեմբերի 14-ին:

41. 2003թ. հոկտեմբերի 21-ին, ինչպես նախկինում այս անգամ ևս, ՀՌԱՀ-ը նույն կերպ է արձագանքում երկրորդ դիմումատուի՝ պատճառաբանված որոշում տրամադրելու խնդրանքին:

4. 56-րդ կապուղու մրցույթը

42. 2003 նոյեմբերի 19-ին ՀՌԱՀ-ը հայտարարում է մրցույթ վերջին ազատ կապուղու, այն է՝ 56-րդ կապուղու համար:

43. Դիմումատու ընկերությունը և 3 այլ ընկերություններ ներկայացնում են իրենց հայտերը:

44. 2003թ. դեկտեմբերի 29-ին ՀՌԱՀ-ն անցկացնում է վարկանիշային քվեարկություն և արտոնագիր շնորհում Երկիր Մեդիա հեռուստաընկերությանը: ՀՌԱՀ-ի որոշումը բառացիորեն կրկնում էր իր նախկին որոշումները: Պատճենն ուղարկվում է դիմումատու ընկերությանը 2003թ. դեկտեմբերի 30-ին:

45. 2004թ. հունվարի 22-ին, ինչպես նախկինում այս անգամ ևս, ՀՌԱՀ-ը նույն կերպ է արձագանքում երկրորդ դիմումատուի՝ պատճառաբանված որոշում տրամադրելու խնդրանքին:

5. Վերը նշված հայտերի մերժման պատճառների վերաբերյալ դատավարությունները

46. 2003 թ. սեպտեմբերի 29-ին դիմումատու ընկերությունը երկու հայցադիմում է ներկայացնում Տնտեսական դատարան՝ բողոքելով ՀՌԱՀ-ի անգործության դեմ: Մասնավորապես՝ դիմումատու ընկերությունը նշել էր, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված պարտավորության պարտավոր էր համապատասխան որոշումները կայացնելուց հետո տասնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել 25-րդ, 31-րդ, 39-րդ և 51-րդ կապուղիների համար մրցույթների հայտերով արտոնագրի տրամադրման մերժման պատճառների մասին և համաձայն Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգի 63-րդ հոդվածից բխող պարտավորության՝ որոշում կայացնել արտոնագիր տրամադրելու կամ այն մերժելու մասին ներկայացված յուրաքանչյուր հայտի վերաբերյալ: Դիմումատու ընկերությունը պահանջում էր, *inter alia*, որպեսզի ՀՌԱՀ-ի կողմից մերժման պատճառները չտրամադրելը և ներկայացված առաջարկությունների առնչությամբ որևէ որոշում չկայացնելը հայտարարվի անօրինական, ինչպես նաև որոշում կայացվի, որով ՀՌԱՀ-ին պարտադրվի տրամադրել մերժման պատճառները:

47. 2004թ. մարտի 22-ին դիմումատու ընկերությունը ներկայացնում է մեկ այլ հայցադիմում՝ լրացնելով նախկինում ներկայացված եկու բողոքները 3-րդ, 63-րդ և 56-րդ կապուղիների մրցույթի հետ կապված նույնաբովանդակ հայցապահանջներով:

48. 2004թ. մարտի 23-ին Տնտեսական դատարանը դիմումատու ընկերության հայցը մերժում է անհիմն լինելու հիմքով: Այս կապակցությամբ, հետազոտելով կողմերի փաստարկները, Տնտեսական դատարանը, *inter alia*, գտավ.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 47-րդ և [ՀՌԱՀ] Կանոնակարգի 30-րդ, 47-րդ, 61-րդ և 63-րդ և [Մրցույթի կարգի] 18-րդ և 19-րդ հոդվածներից բխում է, որ [ՀՌԱՀ-ը] պետք է կայացնի [ՀՌԱՀ] Կանոնակարգի 63-րդ հոդվածով նախատեսված միայն մեկ որոշում՝ լիցենզիա տալու մասին, որը կվերաբերի հաղթող ճանաչված մրցույթի մասնակցին, որը միաժամանակ որոշում է մրցույթի «չհաղթած» մասնակիցների մասին, քանի որ այդ որոշումը կայացվում է ոչ թե յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ, այլ մրցույթի արդյունքների հիման վրա: Դա ուղղակիորեն բխում է նաև [ՀՌԱՀ] Կանոնակարգի 61-րդ հոդվածի 2-րդ պարբերության շարադրանքի իմաստից, որի համաձայն հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիա տալու համար որոշումը [ՀՌԱՀ-ը] կայացնում է մրցույթի արդյունքների հիման վրա և ոչ թե դիմումի քննարկման արդյունքում:

Փաստորեն օրենքը տարանջատել է մրցույթի արդյունքներով լիցենզիա տալու հարցը որոշելու դեպքն առանց մրցույթի լիցենզիա տալու դեպքից, այն է՝ կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա տալու դեպքից, ինչը հանգեցնում է նրան, որ Հանձնաժողովը տվյալ դեպքերում, հիմնվելով մրցույթի արդյունքների վրա, ընդունել է կանոնակարգի 63-րդ հոդվածով նախատեսված

որոշումներից մեկը, այն է՝ հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիա տալու մասին:

...

[Հանձնաժողովի] որոշումը՝ մրցույթի հաղթողին լիցենզիա տալու մասին, չի կարող մեկնաբանվել ոչ այլ կերպ, քան որպես մրցույթի հաղթողին որոշելու և նրան լիցենզիա տալու մասին որոշում կայացնելուց հետո մրցույթի մյուս մասնակիցների մոտ որևէ անորոշության հարցում՝ արդյոք իրենց դիմումը մերժվել է, թե ոչ, չի կարող առկա լինել, քանի որ նրանց հայտնի է դառնում մրցույթի հաղթողը, հետևաբար՝ մաս այն, որ իրենք չեն հաղթել:

Դատաքննությանը պարզվեց, որ Հանձնաժողովը, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի, Կանոնակարգի 63-րդ հոդվածի և Կարգի 19-րդ կետի պահանջներով, ընդունել է հառուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա տալու որոշումներ և Կանոնակարգի 67-րդ հոդվածով ու Կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետում ուղարկել է դիմողին, որպիսի հանգամանքը հաստատվում է 2003 թ. հունիսի 12-ի թիվ ԻՎ-158, 2003 թ. հուլիսի 19-ի թիվ ԻՎ-222, 2003թ. հոկտեմբերի 14-ի թիվ ԻՎ-312 և 2003թ. դեկտեմբերի 30-ի թիվ ԻՎ-397 գրություններով:

Փաստորեն, վերը նշված գրություններով հաստատվում է, որ Հանձնաժողովը տեղեկացրել է «Մելտեքս» ՄՊԸ-ին մրցույթներում լավագույն կազմակերպության չընտրվելու վերաբերյալ, իսկ ստանալով այդ որոշումների մասին ծանուցումները, «Մելտեքս» ՄՊԸ-ն իմացել է մաս այն մասին, որ Երևան քաղաքի տարածքում 25-րդ, 31-րդ, 39-րդ, 51-րդ, 56-րդ, 63-րդ դեցիմետրային և 3-րդ մետրային կապուղիներով հայտարարված հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթներում հիմնավորվում է, որ «Մելտեքս» ՄՊԸ-ն հաղթող չի ճանաչվել, այսինքն՝ նրա դիմումը մերժվել է, որով էլ հիմնավորվում է, որ «Մելտեքս» ՄՊԸ-ն տեղյակ է եղել Հանձնաժողովի նշված որոշումների կայացման պատճառի և իրավական հիմքերի մասին, մասնավորապես՝ այն մասին, որ Հանձնաժողովը որոշում կայացնելիս ղեկավարվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի պահանջներից, որը սահմանում է արտոնագրատիրոջ ընտրության չափանիշները:

Այսպիսով, վերը նշվածով դատարանը հաստատված է համարում, որ «Մելտեքս» ՄՊԸ-ն ժամանակին և օրենքով սահմանված կարգով ծանուցված է եղել Երևան քաղաքի տարածքում 25-րդ, 31-րդ, 39-րդ, 51-րդ, 56-րդ, 63-րդ դեցիմետրային և 3-րդ մետրային կապուղիներով հայտարարված հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի արդյունքների՝ որոշումների մասին, որոնցում, ըստ էության, շարադրված են եղել մաս «Մելտեքս» ՄՊԸ-ի դիմումի մերժման հիմքերը և պատճառները, հետևաբար՝ պատասխանողը չի դրսևորել անգործություն և չի խախտել «Մելտեքս» ՄՊԸ-ի՝ օրենքով երաշխավորված իրավունքը, ուստի, այդ պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման»:

49. 2004 թ. ապրիլի 1-ին դիմումատու ընկերությունը նյութական իրավունքի խախտման հիմքով բերում է վճռաբեկ բողոք՝ ներկայացնելով նույն փաստարկները, որոնք բերվել էին սկզբնական հայցադիմումներում:

50. 2004 թ. ապրիլի 23-ին Վճռաբեկ դատարանը մերժում է այդ բողոքը՝ բառացիորեն կրկնելով Տնտեսական դատարանի համապատասխան եզրահանգումները և եզրակացնում, որ.

«Նման պայմաններում նյութական իրավունքի խախտման հիմքով բերված բողոքում ներկայացված փաստարկները հիմնավորված չեն, քանի որ դրանք մանրամասնորեն հերքվել են Տնտեսական դատարանի վճռի պատճառաբանական մասում»:

6. 63-րդ կապուղու համար մրցութային հայտերի վերաբերյալ դատավարությունները

51. 2003 թ. դեկտեմբերի 11-ին դիմումատու ընկերությունը ՀՌԱՀ-ի դեմ հայց է ներկայացնում Տնտեսական դատարան՝ վիճարկելով նրա կողմից 2003թ. հոկտեմբերի 13-ին կայացված որոշումը, որը վերաբերում էր «Սինեմաքս» ՍՊԸ-ին 63-րդ կապուղու համար լիցենզիա տրամադրելուն: Դիմումատու ընկերությունը պնդել է, *inter alia*, որ «Սինեմաքս» ՍՊԸ-ն իր հայտին կից ներկայացրել է կեղծ, ոչ ամբողջական և աղավաղված տեղեկատվություն, ինչը ՀՌԱՀ-ի կողմից անտեսվել է արտոնագիր շնորհելիս: Այնուհետև դիմումատուն նշել է, որ «Սինեմաքս» ընկերությունը չի ունեցել ո՛չ նման հաճախականությամբ հեռարձակելու միջոցներ և ո՛չ էլ նման նպատակ և հեռարձակման լիցենզիան փոխանցելու է «Արմնյուզ Թի Վի» անվանումով մի ընկերության, որը գրանցված չէ որպես լրատվական ընկերություն:

52. Տնտեսական դատարանում վարույթի ընթացքում դիմումատու ընկերությունը մի քանի միջնորդություններ է ներկայացնում՝ պահանջելով ՀՌԱՀ-ին պարտադրել, որպեսզի այն ներկայացնի որոշ փաստաթղթեր, որոնք ենթադրաբար գտնվում էին նրա տնօրինության տակ և որոնք, ըստ դիմումատու կազմակերպության, կարևոր էին գործի ելքի համար՝ ներառյալ «Արմնյուզ» ՍՊԸ-ի և «Սինեմաքս» ՍՊԸ-ի միջև կնքված համաձայնագիրը, որը ենթադրաբար ներառված էր նաև վերջինիս մրցութային փաստաթղթերում: Դիմումատու ընկերությունը նաև միջնորդում է դատարանին որպես վկա հրավիրել «Արմնյուզ Թի Վի» հեռուստաընկերության ղեկավար պրն. Ս-ին:

53. Զննելով միջնորդությունները՝ Տնտեսական դատարանը մերժում է դրանք: Ինչ վերաբերում է որոշ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի մասին միջնորդությանը, ապա Տնտեսական դատարանը գտավ, որ դիմումատու ընկերությունը չի հիմնավորել դրանք իր ուժերով ձեռք բերելու հնարավորության բացակայությունը, ինչպես դա պահանջվում է օրենքով: Բացի այդ, չի ապացուցվել նաև, որ քննարկվող ապացույցն իսկապես գտնվում է ՀՌԱՀ-ի տնօրինության տակ: Ինչ վերաբերում է պրն. Ս.-ին հրավիրելու միջնորդությանը, Տնտեսական դատարանը գտավ, որ դրա կարիքը չկա, քանի որ վիճահարույց հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու համար առկա էին բավարար գրավոր ապացույցներ:

54. 2004թ. հունվարի 21-ին Տնտեսական դատարանն իր՝ երկուսուկես էջ իրավական հիմնավորում պարունակող վճռով որոշում է մերժել դիմումատու ընկերության հայցը՝ անհիմն լինելու պատճառով: Դրանով իսկ հետագոտելով կողմերի ներկայացրած փաստարկները՝ Տնտեսական դատարանը, *inter alia*, գտավ, որ համապատասխան մրցութային գործընթացը կազմակերպվել և դրա արդյունքում որոշումը կայացվել է օրենսդրությանը համապատասխան:

55. 2004թ. փետրվարի 4-ին դիմումատու ընկերությունը նյութական իրավունքի խախտման հիմքով ներկայացնում է վճռաբեկ բողոք, որը նա հետագայում՝ 2004 թվականի փետրվարի 10-ին լրացնում է՝ ներառելով նույն փաստարկները, որոնք բերվել էին սկզբնական բողոքում:

56. 2004 թ. փետրվարի 27-ին Վճռաբեկ դատարանը, տառացիորեն կրկնելով Տնտեսական դատարանի համապատասխան եզրահանգումները, մերժում է բողոքը՝ եզրակացնելով, որ.

«Նման պայմաններում իրավունքի խախտման հիմքով բերված բողոքում ներկայացված փաստարկները հիմնավորված չեն, քանի որ դրանք մանրամասնորեն հերքվել են Տնտեսական դատարանի վճռի պատճառաբանական մասում:»

57. Ինչ վերաբերում է դիմումատու ընկերության միջնորդությունները մերժելուն, ապա Վճռաբեկ դատարանը գտավ, որ Տնտեսական դատարանը քննության է առել և դրանք մերժել պատճառաբանված որոշմամբ, և այդ պատճառով կողմերի հավասարության սկզբունքի խախտման հարց չի ծագում:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

58. Օրենսգրքի համապատասխան հոդվածները խնդրո առարկա ժամանակահատվածում գործող խմբագրությամբ սահմանում են.

Հոդված 159. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու հիմքերը

«Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու (այսուհետ՝ ակտն անվավեր ճանաչելու) համար հիմք են նշված ակտն օրենքին հակասելը և դիմողի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստի առկայությունը:»

Բ. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք

59. Օրենքի համապատասխան հոդվածները, խնդրո առարկա ժամանակահատվածում գործող խմբագրությամբ, սահմանում են.

Հոդված 7. Հեռուստառադիոհաղորդումները և դրանց իրականացման կարգը

«Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում են արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա:»

Հոդված 20. Հակամենաշնորհային երաշխիքը

«Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են ոչ ավելի, քան միևնույն սփռման գոտում եթերային հեռարձակում ունեցող մեկ հեռուստառադիոընկերության կամ մեկ հեռուստաընկերության և (կամ) մեկ ռադիոընկերության արտոնագրատեր լինել:»

Հոդված 37. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը

«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Ազգային հանձնաժողով) անկախ մարմին է՝ պետական հիմնարկի կարգավիճակով, որի գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Ազգային հանձնաժողովի գործունեությունն առնչվում է միայն մասնավոր հեռուստառադիոընկերությունների (հեռուստաընկերությունների կամ ռադիոընկերությունների) արտոնագրման լիցենզավորման) և վերահսկողության հետ:

Ազգային հանձնաժողովը՝ ա) իրականացնում է եթերային հաճախությունների հրապարակային և մրցութային հատկացումը ... գ) հատկացնում է արտոնագրեր (լիցենզիաներ)...

Հոդված 39. Ազգային հանձնաժողովի կազմավորման կարգը

«Ազգային հանձնաժողովը բաղկացած է ինն անդամից, նրանց նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ վեց տարի ժամկետով, բացառությամբ առաջին կազմի...»

[Հոդվածներ 37-ը և 39-ը 2007թ. փետրվարի 26-ին կատարված փոփոխություններից հետո]

«...Հանձնաժողովը բաղկացած է ութ անդամներից:»

«Ազգային հանձնաժողովը անկախ կարգավորող պետական մարմին է, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով, բացառությամբ առաջին կազմի:»]

Հոդված 47. Արտոնագրում (լիցենզավորում): Արտոնագրատերը

«Արտոնագիրը (լիցենզիան) միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս իրականացնել հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում, օգտվել որոշակի հաճախությունից, կաբելային (լարային) ցանցից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների

իրականացման նպատակով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման արտոնագիրը (լիցենզիան) տրվում է մրցութային կարգով՝ հաճախությունների ցանկին համապատասխան...»

Հոդված 50. Արտոնագրատիրոջ ընտրությունը

«Ազգային հանձնաժողովն արտոնագրատիրոջ ընտրության ժամանակ հաշվի է առնում՝

ա) սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը.

բ) հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը.

գ) դիմողի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները.

դ) աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:»

[Հոդված 50-ը՝ 2003թ. դեկտեմբերի 3-ին կատարված լրացմամբ, որն ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 31-ին

«...Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիր տալը մերժելու և արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները:»]

Հոդված 51. Արտոնագիր (լիցենզիա) տալը մերժելու հիմքերը

«Արտոնագիր (լիցենզիա) չի տրվում, եթե՝

ա) դիմողը սույն օրենքի համաձայն չի կարող լինել արտոնագրատեր.

բ) դիմումում նշված տվյալները չեն համապատասխանում իրականությանը.

գ) բացակայում են հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ հայտարարված տեխնիկական հնարավորությունները բավարար չեն:

Արտոնագիր (լիցենզիա) տալը մերժելու հիմքերի մասին գրավոր տեղեկացվում է դիմողին՝ որոշման ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Արտոնագրման (լիցենզավորման) մերժումը կարող է գանգատարկվել դատական կարգով:»

Հոդված 54. Արտոնագրերի (լիցենզիաների) գործողության ժամկետները

«Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման կամ արտադրության և հեռարձակման արտոնագիրը (լիցենզիան) հեռուստառադիոընկերություններին տրվում է՝ ա)..., բ) հինգ տարով՝ եթեայլին հեռուստառադիոհաղորդումների իրականացման համար:»

Գ. «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք (ուժի մեջ է 2001թ. դեկտեմբերի 28-ից)

60. ՀՌԱՀ Կանոնակարգի համապատասխան հոդվածները սահմանում են.

Հոդված 30

«Հանձնաժողովը սահմանում է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը, պայմաններն ու ժամկետները:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ կամ ազատ (չգրադեցված) հաճախության առկայության դեպքում Հանձնաժողովը հայտարարում է տվյալ հաճախությամբ հեռարձակման լիցենզավորման մրցույթ:»

Հոդված 31

«Հանձնաժողովը՝ ... գ) հատկացնում է լիցենզիա...»

Հոդված 61

«...»

Հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիա տալու համար, մրցույթի արդյունքների հիման վրա, Հանձնաժողովն իր նիստում մրցույթի կարգով սահմանված ժամկետներում ընդունում է որոշում:

Հանձնաժողովն իր նիստի տեղի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին նիստի օրվանից ոչ ուշ, քան հինգ օր առաջ տեղեկատվություն է հրապարակում մամուլում:»

Հոդված 63

«Դիմումի քննարկման արդյունքում Հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ ա) լիցենզիա տալու մասին կամ բ) լիցենզիա տալը մերժելու մասին:»

Հոդված 67

«Լիցենզիա տալու կամ դրա տալը մերժելու մասին որոշման պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է դիմողին որոշումն ընդունելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:»

Դ. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2002թ. հունվարի 24-ի որոշում N4 Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը հաստատելու մասին

61. Մրցույթի կարգի համապատասխան հոդվածները խնդրո առարկա ժամանակահատվածում գործող խմբագրությանը սահմանում են.

«18. Ըստ դիմումները քննարկելու հերթականության Հանձնաժողովը անցկացնում է բաց վարկանիշային քվեարկություն: Լավագույն կազմակերպությունն ընտրվում է վարկանիշային քվեարկության արդյունքներով:

19. Հանձնաժողովը որոշում է ընդունում լավագույն կազմակերպությանը հաղթող ճանաչելու և հեռուստատաղիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա տալու մասին:

20. ...Հանձնաժողովը որոշումը հրապարակում է այն ընդունելուց անմիջապես հետո:

...

22. Հանձնաժողովի որոշման պատճենը տասնօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկվում է մրցույթի մասնակիցներին:»

III. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍԱՊԱՏԱՍԻԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ա. Նախարարների Կոմիտեի հանձնարարական թիվ (2000)23

62. 2000թ. դեկտեմբերի 20-ին Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն անդամ-երկրների համար ընդունեց հեռարձակման բնագավառում կարգավորող մարմինների անկախության և գործունեության վերաբերյալ թիվ (2000) 23 հանձնարարականը, որում անդամ-երկրներին, *inter alia*, խորհուրդ էր տրվում «նախատեսել իրենց օրենսդրությունների մեջ այնպիսի դրույթներ և քաղաքականության մեջ ձեռք առնել միջոցներ, որոնք թույլ կտան հեռարձակման բնագավառում կարգավորող մարմիններին օժտել այնպիսի իրավագործությամբ, որը հնարավորություն կտար նրանց արդյունավետորեն, անկախ և թափանցիկ կերպով իրականացնել ներպետական օրենսդրությամբ սահմանված իրենց գործառույթը՝ սույն հանձնարարականի հավելվածում գետեղված ուղենիշներին համապատասխան »:

63. Հանձնարարականին կից ուղենիշների համապատասխան դրույթները սահմանում են.

“...

3. Հեռարձակման բնագավառում կարգավորող մարմնի գործունեության կանոնները՝ մասնավորապես այդ մարմնին անդամակցելը, նրա գործունեության անկախության հիմնապայմանն են: Ուստի դրանք պետք է

սահմանված լինեն այնպես, որ իրեն պաշտպանեն ցանկացած միջամտությունից՝ մասնավորապես քաղաքական ուժերի կամ տնտեսական շահերի կողմից:

4. Այս նպատակով անհամապատասխանությունների առնչությամբ հատուկ կանոններ պետք է նախատեսվեն խուսափելու համար, որ՝

- Կարգավորող մարմինը գտնվի քաղաքական ուժի ազդեցության տակ,

- Կարգավորող մարմնի անդամներն իրականացնեն գործառույթներ կամ շահեր հետապնդեն ձեռնարկություններում կամ լրատվության կամ հարակից բնագավառներում գործող այլ կազմակերպություններում, ինչը կարող է հանգեցնել շահերի բախման կապված կարգավորող մարմնի անդամ հանդիսանալու հետ:

5. Ավելին, կանոնները պետք է երաշխավորեն, որ այս մարմնի անդամները՝

- նշանակվեն ժողովրդավարական և թափանցիկ եղանակով,

- չեն կարող լիազորություններ կամ հրահանգներ ստանալ այլ անձից կամ մարմնից:

- չանեն այնպիսի հայտարարություն կամ կատարեն այնպիսի գործողություն, որը կարող է վնաս հասցնել իրենց գործառույթների իրականացման անկախությանը և չչարաշահեն դրանք:

...

13. Հեռարձակման բնագավառի կարգավորող մարմնի կարևորագույն գործառույթներից մեկը որպես կանոն հեռարձակման արտոնագրի շնորհումն է: Հեռարձակման արտոնագրի շնորհման և երկարացման ընթացակարգի համար սահմանված հիմնական պայմանները և չափանիշները պետք է հստակորեն սահմանված լինեն օրենքով:

14. Հեռարձակման բնագավառում արտոնագրի տրամադրման գործընթացը կանոնակարգող նորմերը պետք է լինեն պարզ, հստակ սահմանված և պետք է կիրառվեն բաց, թափանցիկ և անկողմնակալ ձևով: Կարգավորող մարմնի որոշումները պետք է լինեն բավարար չափով հրապարակային:

...

27. Կարգավորող մարմնի կայացրած բոլոր որոշումները և ընդունված կանոնները պետք է՝

- պատշաճ կերպով հիմնավորված լինեն՝ համապատասխան ներպետական օրենսդրությանը,

- լինեն վերանայման ենթակա իրավասու դատական ատյանների կողմից՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան

- մատչելի լինեն հանրությանը:”

Բ. Նախարարների կոմիտեի՝ հեռարձակման բնագավառում կարգավորող մարմինների անկախության և գործունեության վերաբերյալ հռչակագիր (ընդունված Նախարարների Կոմիտեի կողմից 2008թ. մարտի 26-ին նախարարների տեղակալների 1022-րդ նստաշրջանի ժամանակ)

64. Հռչակագրի համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

«13. Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների մեծամասնությունում կարգավորող մարմինը նշանակվում է ազգային ժողովի կողմից կամ երկրի ղեկավարի կողմից ազգային ժողովի ներկայացմամբ: Որոշ անդամ-երկրներում, որպեսզի կարգավորող մարմինն արտացոլի երկրի սոցիալական և քաղաքական բազմազանությունը, անդամների մի մասին կամ բոլորին առաջադրում են կառավարության մաս չկազմող խմբերը, որոնք համարվում են հասարակության ներկայացուցիչ: Ավելին, մի քանի անդամ-երկրներում կարգավորող մարմնի նշանակման համար օրենքով նախատեսված են նշանակման օբյեկտիվ չափանիշներ:

Դրան հակառակ, մի շարք երկրներում անդամները նշանակվում են մեկ մարմնի միանձնյա որոշման հիման վրա օրինակ՝ պետության ղեկավարի կամ կառավարության կողմից հաճախ առանց հստակորեն սահմանված ընտրության չափանիշների: Կարգավորող մարմնի անդամների նշանակումը պետության ղեկավարի և/կամ կառավարության կողմից որոշ դեպքերում քննադատվել է՝ առաջ քաշելով այն հարցը, որ նման դեպքերում անդամությունը կներկայացնի կամ կարտացոլի քաղաքական իշխանության կառուցվածքը:

14. Մտավախություններ են հաճախ արտահայտվել այն առումով, որ անդամներին առաջադրող կամ նշանակող մարմինները կարող են ճնշում գործադրել անդամների վրա նրանց նշանակումից հետո: Իրականում որոշ անդամ-երկրներում կառավարման մարմնի անդամները հաճախ են մեղադրվում այն բանի համար, որ իրենք գործում են այն պետական մարմնի անունից, որն իրենց նշանակել է կամ այն քաղաքական միավորման անունից, որին սատարում է իրեն նշանակող կամ հաստատող մարմինը:»

Գ. Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1361 (2004)[1] բանաձևը Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման մասին

65. ԵԽԽՎ այս բանաձևի 19-րդ պարբերությունը սահմանում է.

«Ինչ վերաբերում է ազատ արտահայտվելու իրավունքին և լրատվամիջոցների բազմակարծության խնդրին, ապա Վեհաժողովը մտահոգված է Հայաստանում լսատեսողական լրատվամիջոցների ոլորտում տեղի ունեցող զարգացումների շուրջ և լուրջ կասկածներ է արտահայտում նաև էլեկտրոնային լրատվամիջոցների բազմակարծ լինելու վերաբերյալ՝ մասնավորապես ավիսուսայով, որ գործող օրենքի անհստակության հետևանքով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին բացահայտ ինքնահայեցողական լիազորություններ են տրված հեռարձակման

թույլտվությունների տրամադրման ոլորտում, հատկապես Ա1+ հեռուստատեսային ալիքի կապակցությամբ: Այնուհանդերձ, Վեհաժողովը նկատի է առնում 2003թ. դեկտեմբերին զանգվածային լրատվամիջոցների մասին օրենքի ընդունումը և Ռ-ադիոյի ու հեռուստատեսության մասին օրենքում փոփոխությունների կատարումը:»

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄՈՒՄՏԱՏՈՒԻ ԶՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

66. Դատարանն առաջին հերթին կարևոր է համարում որոշել երկրորդ դիմումատուի զոհի կարգավիճակի հարցը: Դատարանը կրկնում է որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածում օգտագործվող «զոհ» եզրույթը նշանակում է անձ, որն անմիջականորեն տուժել է խնդրո առարկա գործողությունից կամ անգործությունից (տե՛ս այլոց շարքում Վատան ընդդեմ Ռուսաստանի (*Vatan v. Russia*), թիվ 47978/99, պարբ. 48, 7 հոկտեմբեր 2004թ.): Դատարանն այնուհետև կրկնում է, որ անձը չի կարող իր իրավունքի խախտման վերաբերյալ գանգատ ներկայացնել, եթե նա չի հանդիսանում դատավարության կողմ նույնիսկ այն դեպքում, երբ նա դատավարության կողմ հանդիսացող ընկերության բաժնետեր է և/կամ այդ ընկերության գործադիր տնօրեն (տե՛ս այլոց շարքում Ֆ. Սանտոս և Ֆաչադան ընդդեմ Պորտուգալիայի (*F. Santos Lda. and Fachadas v. Portugal*) (որոշում), թիվ 49020/99, 19 սեպտեմբեր 2000թ. և Նոսովն ընդդեմ Ռուսաստանի (*Nosov v. Russia*) (որոշում), թիվ. 30877/02, 20 հոկտեմբեր 2005թ.): Բացի այդ, որոշակի հանգամանքներում ընկերության միակ սեփականատերը կարող է պնդել, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով «զոհ է» իր ընկերության նկատմամբ կիրառված վիճարկվող միջոցների առնչությամբ (տե՛ս այլոց շարքում, Անկարկրոնան ընդդեմ Շվեդիայի (*Ankarcrona v. Sweden*) (որոշում), թիվ 35178/97, 27 հունիս 2000թ., և Գլաս Նադեժդան և Անատոլիյ Ելենկովն ընդդեմ Բուլղարիայի (*Glas Nadezhda EOOD and Anatoliy Elenkov v. Bulgaria*), թիվ. 14134/02, պարբ. 40, ECHR 2007-...): Երբ այս հանգամանքն առկա չէ, ընկերության իրավասուրյեկտության անտեսումը կարող է արդարացված լինել միայն բացառիկ հանգամանքներում՝ մասնավորապես, երբ հստակ է, որ ընկերությունը չի կարող դիմել Կոնվենցիոն ինստիտուտներին իր կանոնադրությամբ ստեղծված մարմինների միջոցով կամ լուծարման պարագայում՝ լուծարային կառավարչի միջոցով (տե՛ս Ագրոտեքսիմը և այլոք ընդդեմ Հունաստանի (*Agrotexim and Others v. Greece*), 1995թ. հոկտեմբերի 24-ի վճիռը, Շարք Ա թի. 330, էջ 25, պարբ. 66, ՍիԴիԱյ Հոլդինգն ու այլոք ընդդեմ Սլովակիայի (*CDI Holding Aktiengesellschaft and Others v. Slovakia*) (որոշում), թիվ 37398/97, 18 հոկտեմբեր 2001թ և Ամաթ-Գ

ՍՊԸ-ն և Մեքադիշվիլին ընդդեմ Վրաստանի (*Amat-G Ltd and Mebaghishvili v. Georgia*), թիվ 2507/03, պարբ. 33, ECHR 2005-...):

67. Դատարանն ի սկզբանե նշում է, որ նման բացառիկ հանգամանքներ սույն գործով չեն հաստատվել (տե՛ս դրան հակառակ Գ. Ի.-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի (*G.J. v. Luxembourg*), թիվ. 21156/93, պարբ. 24, 26 հոկտեմբեր 2000թ.): Դատարանն այնուհետև նշում է, որ երկրորդ դիմումատուն չի ներկայացրել որևէ ապացույց, որը կհաստատեր այն հանգամանքը, որ նա իրականում հանդիսանում է դիմումատու ընկերության բաժնետեր և առավել ևս՝ ընկերության միակ սեփականատեր: Նա նույնիսկ իր անունից չի ներկայացրել գանգատի վերաբերյալ որևէ հիմնավորում: Դատարանի տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը փաստում են, սակայն, որ դիմումատու ընկերությունը որպես իրավաբանական անձ միայնակ է հանդես եկել, դիմել արտոնագիր ստանալու համար և մերժում ստացել, ինչպես նաև հետագայում համապատասխան դատաքննություններում հանդես եկել որպես դատավարության կողմ: Ներպետական դատարանների և ՀՌԱՀ-ի կայացրած բոլոր որոշումները վերաբերում էին դիմումատու ընկերությանը, այլ ոչ երկրորդ դիմումատուին, որը նույնիսկ չէր ներկայացնում դիմումատու ընկերությունը ներպետական դատավարության ընթացքում: Հետևաբար, բոլոր նյութերը ցույց են տալիս, որ արտոնագրի տրամադրման մերժումը և հետագա դատաքննությունները ուղղակիորեն ազդել են միայն դիմումատու ընկերության շահերի վրա և Դատարանին չի ներկայացվել որևէ փաստաթուղթ, որը նրան թույլ կտար երկրորդ դիմումատուին որպես «գոհ» դիտարկել Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով:

68. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ գանգատը երկրորդ դիմումատուի մասով *ratione personae* չի համապատասխանում Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան:

69. Ուստի Դատարանը կսահմանափակվի դիմումի մեջ բարձրացված այն գանգատների ուսումնասիրությամբ, որոնք վերաբերում են դիմումատու ընկերությանը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

70. Դիմումատու ընկերությունը բողոքել է, որ հեռարձակման արտոնագրի մերժումը հանգեցրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված խոսքի ազատության խախտմանը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և կարծելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Ա. Ընդունելիություն

71. Դատարանը նշում է, որ սույն բողոքն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Դատարանը նաև նշում է, որ բողոքն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է ճանաչել ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննություն

1. Արդյոք եղել է միջամտություն դիմումատու ընկերության տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատությանը

72. Կառավարությունը պնդել է, որ դիմումատու ընկերության՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտություն չի եղել: Հեռարձակման արտոնագիր տրվել է մրցույթ հայտարարելուց հետո ներկայացված հայտերի համեմատման արդյունքում: Անհաջողակ դիմողներին ոչ թե մերժվել է արտոնագրի տրամադրումը, այլ նրանք պարզապես չեն ճանաչվել մրցույթի հաղթող. հենց դա էլ տեղի է ունեցել դիմումատու ընկերության պարագայում: ՀՌ-ԱՀ-ը չի կայացրել դիմումատու ընկերությանը արտոնագիր տրամադրելը մերժելու որևէ որոշում, այն պարզապես հրապարակել է մրցույթի հաղթողին:

73. Դիմումատու ընկերությունը նշել է, որ թե՛ անհատական դիմողներին, թե՛ մրցութային ընթացակարգի արդյունքում մասնակիցներին արտոնագիր չտրամադրելու որոշումը հանդիսացել է արտոնագրի տրամադրման մերժում: Հետևաբար, մրցույթի հաղթողին հայտարարելը հանդիսացել է բոլոր մյուս հայտեր ներկայացնողներին արտոնագրի տրամադրման մերժում:

74. Դատարանը գտնում է, որ չկա էական տարբերություն անհատական դիմողներին հեռարձակման արտոնագիրը մերժելու և մրցույթը չհաղթելու արդյունքում արտոնագիր ձեռք չբերելու միջև: Դիմումատու ընկերությանը նրա մասնակցած մրցույթի հաղթող չճանաչելով՝ ՀՌ-ԱՀ-ը փաստացի մերժել է դիմումատու ընկերության

արտոնագիր ստանալու հայտերը: Նմանատիպ մերժումները հանդիսացել են միջամտություն դիմումատու ընկերության՝ տեղեկատվության և գաղափարներ տարածելու ազատությանը (տե՛ս Գրաուզոն ընդդեմ Լեհաստանի (*Grauso v. Poland*), թիվ 27388/05, 1997թ. ապրիլի 9-ի Հանձնաժողովի որոշումը, չիրապարակված, ինչպես նաև, *mutatis mutandis*, Վերեին Ալտերնատիվես Լոքայրադիո Բեռնը և Վերեին Ռադիո Դրեյեկլենդ Բազելն ընդդեմ Շվեյցարիայի (*Verein Alternatives Lokalradio Bern and Verein Radio Dreyeckland Basel v. Switzerland*), թիվ 10746/84, 1986թ. հոկտեմբերի 16-ի Հանձնաժողովի որոշումը, Որոշումներ և հաշվետվություններ 49, էջ 126, Ինֆորմատիոնսվերեին Լենտիան և այլոք ընդդեմ Ավտրիայի (*Informationsverein Lentia and Others v. Austria*), 1993թ. նոյեմբերի 24-ի վճիռը, Շարք A թիվ 276, էջ 13, պարբ. 27, Բրուկն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Brook v. the United Kingdom*), թիվ 38218/97, 2000թ. հուլիսի 11-ի որոշումը, Միացյալ քրիստոնյա հեռարձակողներ ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (*United Christian Broadcasters Ltd v. the United Kingdom*) թիվ 44802/98, 2000թ. նոյեմբերի 7-ի որոշումը և Դեմութն ընդդեմ Շվեյցարիայի (*Demuth v. Switzerland*), թիվ 38743/97, պարբ. 30, ECHR 2002-IX):

75. Հետևաբար պետք է պարզել, թե արդյոք նման միջամտությունները «նախատեսված են օրենքով», հետապնդել են 10-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասությամբ կամ 2-րդ մասով ամրագրված օրինական մեկ կամ մի քանի նպատակներ և «անհրաժեշտ են եղել ժողովրդավարական հասարակությունում»:

76. Այսպիսով, Դատարանը ի նկատի կունենա, որ 10-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասության համաձայն պետություններին թույլ է տրվում արտոնագրման համակարգի միջոցով կարգավորել իրենց տարածքում հեռարձակման կազմակերպման եղանակը մասնավորապես՝ վերջինիս տեխնիկական կողմերը: Արտոնագրի տրամադրումը կարող է պայմանավորված լինել նաև այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են առաջարկվող ալիքի բնույթն ու նպատակները, նրա հավանական լսարանը ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակում, կոնկրետ լսարանի իրավունքներն ու կարիքները և միջազգային-իրավական փաստաթղթերից ծագող պարտավորությունները: Դա կարող է հանգեցնել միջամտությունների, որոնց նպատակները կարող են իրավաչափ լինել 1-ին մասի 3-րդ նախադասության իմաստով՝ թեև կարող են չհամապատասխանել 2-րդ մասում շարադրված նպատակներից ոչ մեկին: Այնուամենայնիվ, նման միջամտությունների համապատասխանության հարցը պետք է գնահատվի 2-րդ պարբերության լույսի ներքո (տե՛ս Միացյալ քրիստոնյա հեռարձակողներ ՍՊԸ (*United Christian Broadcasters Ltd*) և Դեմութ (*Demuth*), պարբ. 33, նշված վերը):

2. Արդյոք միջամտություններն արդարացված էին

(ա) Կողմերի փաստարկները

77. Կառավարությունը պնդել է, որ հեռարձակման արտոնագիր տրամադրելու չափանիշները սահմանված են եղել օրենքով: Մրցույթի հաղթող է ճանաչվել այն հայտ ներկայացնողը, որը ստացել է ամենաշատ միավորները այս չափանիշների գնահատումից հետո: Այսպիսով, դիմումատու ընկերությունը տեղեկացվել է քննարկվող մրցույթում չհաղթելու պատճառների մասին, քանի որ տեղյակ է եղել, որ հավաքել է ավելի քիչ միավորներ, քան մյուս մասնակիցները և չի ճանաչվել հաղթող: Ավելին՝ դիմումատու ընկերության ներկայացուցիչը ներկա է գտնվել ՀՌ-ԱՀ-ի անցկացրած մրցույթի բոլոր փուլերին, որոնք հրապարակային էին, ներառյալ երբ ներկայացվել են մի քանի մրցակից հայտեր և երբ անցկացվել են վարկանիշային քվեարկություններ: Սա ցույց է տալիս, որ դիմումատու ընկերությունն ուներ հեռարձակման արտոնագիր տրամադրելը մերժելու հիմքերին տեղեկացված լինելու հնարավորություն:

78. Դիմումատու ընկերությունը պնդել է, որ օրենքի համաձայն ՀՌ-ԱՀ-ը պարտավոր է եղել տեղեկացնել իրեն արտոնագիր տրամադրելը մերժելու պատճառների մասին: Կազմակերպության ներկայացուցչի սուկ ներկայությունը մրցակից հայտերի հրապարակման և վարկանիշային քվեարկության ժամանակ, որն առավել ևս ցույց է տվել միայն վերջնական արդյունքները, չի հանդիսացել պատճառաբանված որոշման պատշաճ հանձնում: ՀՌ-ԱՀ-ի՝ մրցույթի արդյունքները հայտարարող նամակները նույնպես չեն կարող ճանաչվել պատճառների տեղեկացում, քանի որ դրանք ոչ թե սահմանել են համապատասխան որոշումների հիմքերը, այլ պարզապես հայտարարել են այդ որոշումների արդյունքները: Մրցակից հայտերի գնահատումը մեկնաբանող որոշումների հիմքերը չհրապարակելով՝ ՀՌ-ԱՀ-ն անհնարին է դարձրել հեռարձակման արտոնագիր տրամադրելիս իր կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով սահմանված արտոնագրման չափանիշների պահպանման ստուգումը: Այս հանգամանքը արտոնագրման գործընթացը դարձրել է կողմնակալ և օրենքին չհամապատասխանող:

79. Դիմումատու ընկերությունը նաև պնդել է, որ կայացած ժողովրդավարական պետություններում հանրային իշխանության կողմից որոշում կայացնելու թափանցիկությունն ու բաց լինելը առանցքային դեր են խաղում հանրային իշխանության գործունեության վերահսկելիության, նրա հանդեպ հասարակական վստահության և նրա արդարության ապահովման գործում, հատկապես երբ իշխանության այդ մարմինները վճռում են հիմնարար իրավունքներին վերաբերող հարցեր: Պատճառաբանված որոշման բացակայության պարագայում արդարությունը, անկողմնակալությունն ու օրենքին համապատասխանությունը չեն կարող ապացուցվել:

Ավելին՝ պատճառները չիրապարակելը գրկել է անհաջողակ դիմողներին իրենց կողմից ներկայացրած հայտերի չհաղթելու պատճառները ճշտելու և մերժումը վիճարկելու հնարավորությունից: Երբ պետական մարմինը, ինչպիսին ՀՌԱՀ-ն է, ունի իրավագործություն իրավունքների նկատմամբ և իրավասու է կայացնել այդ իրավունքներին միջամտող որոշումներ առանց որոշման հավելյալ պատճառաբանում տրամադրելու, վարկանիշային համակարգը բավարար չէ:

(բ) Դատարանի գնահատականը

80. Դատարանի քննության առաջին քայլը հեռարձակման արտոնագիր տրամադրելու մերժման՝ 10-րդ հոդվածի իմաստով օրենքով սահմանված լինելը պարզելն է: Համաձայն հաստատված նախադեպային իրավունքի քննարկվող արտահայտությունը, որն օգտագործվում է նաև Կոնվենցիայի 9-րդ և 11-րդ հոդվածներում, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածում օգտագործվող «նախատեսված է օրենքով» արտահայտությունը, ոչ միայն պահանջում են, որպեսզի միջամտությունը քննարկվող հոդվածներում ամրագրված իրավունքներին ունենա որոշակի հիմք ազգային օրենսդրությունում, այլ վերաբերում են նաև այդ օրենքի որակին: Օրենքը պետք է մատչելի լինի շահագրգռված անձանց համար և ունենա բավարար հստակ ձևակերպում, որպեսզի հնարավորություն տա նրանց (անհրաժեշտության դեպքում պատշաճ խորհրդատվության միջոցով) ողջամտության սահմաններում կանխատեսել կոնկրետ գործողության հնարավոր հետևանքները (տե՛ս ի թիվս շատ այլ գործերի Մաեստրին ընդդեմ Իտալիայի (*Maestri v. Italy*), թիվ 39748/98, պարբ. 30, ECHR 2004-I):

81. Բացի դրանից, ազգային օրենսդրությունը պետք է տրամադրի իրավական պաշտպանության միջոց հանրային իշխանությունների կողմից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներին կողմնակալ միջամտության դեպքում: Հիմնարար իրավունքներին վերաբերող հարցերում գործադիր իշխանությանը օրենսդրությամբ տրամադրվող գործողությունների անսահմանափակ ազատությունը կհակասի Կոնվենցիայում արձանագրված ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկին՝ իրավունքի գերակայությանը: Հետևաբար, օրենքը ցանկացած դեպքում պետք է պատշաճ հստակությամբ ամրագրի իշխանություններին տրամադրվող նման ազատության սահմանները և դրա իրականացման ձևը՝ անդրադառնալով քննարկվող միջոցի իրավաչափ նպատակին, որպեսզի անհատին տրամադրի պատշաճ պաշտպանություն կողմնակալ միջամտությունից (տե՛ս Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի (*Rotaru v. Romania*), թիվ 28341/95, պարբ. ..., ECHR 2000-V, Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի (*Hasan and Chaush v. Bulgaria*), թիվ

30985/96, պարբ. 84, ECHR XI): Ինչ վերաբերում է կոնկրետ արտոնագրման ընթացակարգին, Դատարանը կրկնում է, որ արտոնագրման ընթացքում արտոնագրման չափանիշների կիրառման ձևը պետք է ընձեռի բավարար երաշխիքներ կողմնակալությունը բացառելու համար՝ ներառյալ արտոնագրող մարմնի կողմից հեռարձակման արտոնագիրը մերժելու որոշման պատշաճ պատճառաբանվածությունը (տե՛ս Գլաս Նադեժդան և Անատոլիյ Ելենկովն ընդդեմ Բուլղարիայի (*Glas Nadezhda EOOD and Anatoliy Elenkov v. Bulgaria*), նշված վերը, պարբ. 49-51):

82. Անդրադառնալով քննարկվող գործին՝ Դատարանը նշում է, որ ՀՌԱՀ-ի՝ այլ ընկերություններին հեռարձակման արտոնագիր տրամադրելու որոշումները հիմնված են եղել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի և այլ լրացուցիչ իրավական ակտերի վրա: Վերոնշյալ օրենքի 50-րդ հոդվածը հստակեցնում է այն չափանիշները, որոնց հիման վրա ՀՌԱՀ-ը պետք է կայացնի հեռարձակման արտոնագիր տրամադրելու որոշում: Վերջիններս ներառում են՝ «սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը», «հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը», «դիմողի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները», «աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը»: Թեև քննարկվող չափանիշները բավարար հստակ են, խնդրո առարկա ժամանակահատվածում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը հստակորեն չէր պահանջում, որպեսզի արտոնագրող մարմինն այդ չափանիշները կիրառելիս տրամադրի որևէ բացատրություն: Հետևաբար, արտոնագրող մարմինը՝ մեր դեպքում ՀՌԱՀ-ը, դիմումատու ընկերությանը չի տրամադրել և ոչ մի բացատրություն հեռարձակման արտոնագիր տրամադրելը պարբերաբար մերժելու համար: Յուրաքանչյուր դեպքում ՀՌԱՀ-ը պարզապես հայտարարել է մրցույթի հաղթողին՝ ոչ մի բացատրություն չտալով, թե ինչու այս կամ այն ընկերության հայտն ավելի է համապատասխանում անհրաժեշտ չափանիշներին, քան դիմումատու ընկերության հայտը: Թեև ՀՌԱՀ-ը անցկացնում էր հրապարակային լուսմներ, նման լուսմների ժամանակ չէր հրապարակվում ոչ մի որոշում, որը կներառեր նման արտոնագրի տրամադրման կամ մերժման պատճառները: Մրցակից ընկերությունները պարզապես ներկայացնում էին իրենց հայտերը, որից հետո անցկացվում էր վարկանիշային քվեարկություն առանց որևէ պատճառաբանություն տրամադրելու: Հետևաբար, դիմումատու ընկերությունը և հանրությունը չէին տեղեկացվում, թե ինչի հիման վրա է ՀՌԱՀ-ն իրականացնում հեռարձակման արտոնագրի տրամադրումը մերժելու իր լիազորությունը:

83. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հեռարձակման բնագավառում ընդունված ուղենիշները պահանջում են արտոնագրման ընթացակարգը կարգավորող նորմերի բաց և թափանցիկ կիրառում և հատկապես առաջարկում են, որ

«[կ]արգավորող մարմինների կողմից կայացված բոլոր որոշումները... պետք է լինեն...պատշաճ հիմնավորված» (տե՛ս վերևում, պարբ. 63): Գատարանն այնուհետև հաշվի է առնում Հայաստանի վերաբերյալ իր 2004թ. հունվարի 27-ի բանաձևում ԵԽԽՎ-ի կատարած համապատասխան եզրահանգումները, որտեղ վերջինս նշել էր, որ «գործող օրենքի անհատակության հետևանքով [ՀՌԱՀ-ին] բացահայտ ինքնահայեցողական լիազորություններ են տրված» (տե՛ս վերևում, պարբ. 65): Գատարանը գտնում է, որ արտոնագրման այն ընթացակարգը, որով արտոնագրող մարմինը չի պատճառաբանում իր որոշումները, պետական մարմնի կողմից խոսքի ազատության հիմնարար իրավունքին կամայական միջամտություններից բավարար պաշտպանություն չի ապահովում:

84. Գատարանն այդ պատճառով եզրակացնում է, որ դիմումատու ընկերության տեղեկատվություն և գաղափարներ տարածելու ազատության միջամտությունները, մասնավորապես՝ հեռարձակման արտոնագիր տրամադրելու թվով յոթ մերժումները, չեն բավարարել Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջը: Այս պարագայում անհրաժեշտություն չկա պարզելու, թե արդյոք այս միջամտություններն իրավաչափ նպատակ էին հետապնդում և, եթե այսպես է, արդյոք դրանք հետապնդող նպատակին համաչափ էին:

85. Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

86. Գիմումատու ընկերությունը բողոքում էր, որ տեղի ունեցած երկու դատավարություններում ներպետական դատարանները պատճառաբանված վճիռներ չեն կայացրել: Ավելին՝ 63-րդ կապուղով հեռարձակման մրցույթի հետ կապված դատավարության շրջանակներում Տնտեսական դատարանը խախտել էր կողմերի հավասարության սկզբունքը: Գիմումատու ընկերությունը հենվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի վրա, որը համապատասխանաբար սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները...ունի դատարանի կողմից...արդարացի...դատաքննության իրավունք:»

Ընդունելիություն

1. Պատճառաբանված վճիռ ունենալու իրավունք

87. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է դատարաններին նշել իրենց վճիռների պատճառները, սակայն այն չի կարող հասկացվել որպես յուրաքանչյուր փաստարկին մանրամասն պատասխան տալու պարտավորություն: Պատճառները նշելու պարտավորության կիրառման սահմանը կարող է տարբեր լինել կապված ակտի բնույթի հետ: Այդպիսով, անհրաժեշտ է հաշվի առնել, *inter alia*, փաստարկների բազմազանությունը, որոնք դատավարության կողմը կարող է ներկայացնել դատարանին և Պայմանավորվող կողմերի տարբեր մոտեցումները օրենքի դրույթների, սովորութային կանոնների, իրավական կարծիքի և վճիռների ներկայացման և շարադրման վերաբերյալ: Հետևաբար այն հարցը, թե արդյոք դատարանը թերացել է կատարել պատճառաբանելու իր պարտավորությունը, կարող է որոշվել միայն կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո (տե՛ս Հիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի (*Hiro Balani v. Spain*) 1994թ. դեկտեմբերի 9-ի վճիռը, Շարք Ա թիվ 303-B, էջեր 29-30, պարբ. 27): Ավելին, վերաքննիչ բողոքը մերժելիս վերաքննիչ դատարանը կարող է, որպես կանոն, ուղղակիորեն հաստատել ավելի ցածր ատյանի դատարանի որոշման հիմնավորումները (տե՛ս, *mutatis mutandis*, Հելլեն ընդդեմ Ֆինլանդիայի (*Helle v. Finland*), 1997թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, *Reports* 1997-VIII, պարբ. 59-60, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի (*Garcia Ruiz v. Spain*) [GC], թիվ 30544/96, պարբ. 26, ECHR 1999-I և Հիրվիսաարին ընդդեմ Ֆինլանդիայի (*Hirvisaari v. Finland*), թիվ 49684/99, պարբ. 30, 27 սեպտեմբերի 2001):

88. Սույն գործում դիմումատու ընկերությունը պնդում էր, որ վճիռները հիմնավորված չէին, որովհետև Տնտեսական դատարանն ամբողջովին համաձայնել էր ՀՌԱՀ-ի փաստարկների հետ, իսկ Վճռաբեկ դատարանն էլ կրկնել էր Տնտեսական դատարանի եզրահանգումները: Դատարանը նշում է, սակայն, որ համապատասխան վճիռներից երևում է, որ երկու դատավարություններում էլ Տնտեսական դատարանը մանրակրկիտ ուսումնասիրել էր կողմերի և՛ գրավոր և՛ բանավոր փաստարկները: 2004թ. մարտի 23-ի վճիռը պարունակում էր հինգ, իսկ 2004թ. հունվարի 21-ի վճիռը՝ երկուսու կես էջ իրավական հիմնավորում առ այն, թե ինչու էին դիմումատու ընկերության գանգատները չհիմնավորված: Այն փաստը, որ Տնտեսական դատարանն իր եզրահանգումներում համաձայնել էր կողմերից մեկի՝ այս դեպքում ՀՌԱՀ-ի փաստարկների հետ, չի նշանակում, որ այս եզրահանգումները հիմնավորված չէին: Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված հիմնավորմանը, ապա դիմումատու ընկերության կողմից բարձրացված փաստարկները գործնականորեն նույնն էին, ինչ որ Տնտեսական դատարանի առջև ներկայացվածները: Ավելին, Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում միայն այն պատճառով,

որ այն հաստատել էր ավելի ցածր ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ:

89. Այստեղից հետևում է, որ դիմումի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի:

2. Կողմերի հավասարություն

90. Դիմումատու ընկերությունը պնդում էր, որ 63-րդ կապուղով հեռարձակման մրցույթի հետ կապված դատավարության շրջանակներում Տնտեսական դատարանը խախտել էր կողմերի հավասարության սկզբունքը, որովհետև այն մերժել էր դիմումատու ընկերության պահանջները և այդպիսով խոչընդոտել էր դիմումատու ընկերությանը իր պնդումը հիմնավորող ապացույցներ ներկայացնել:

91. Դատարանը կրկնում է, որ գործի հանգամանքների համար գործում առկա ապացույցների ունեցած նշանակության գնահատման հարցում ներպետական դատարանները գտնվում են ամենալավ դիրքում: Ավելին, 6-րդ հոդվածը, կրկին որպես ընդհանուր կանոն, նրանց է թողնում գնահատելը, թե արդյոք վկաներ կանչելը նպատակահարմար է (տե՛ս ի թիվս այլոց Վիդալի ընդդեմ Բելգիայի (*Vidal v. Belgium*), 1992թ. ապրիլի 22-ի վճիռը, Շարք Ա թիվ 235 B, պարբ. 33 և Վիերզբիքին ընդդեմ Լեհաստանի (*Wierzbicki v. Poland*), թիվ 24541/94, պարբ. 45, 18 հունիս 2002):

92. Մույն գործում դիմումատու ընկերության կողմից ներկայացված պահանջներն ուսումնասիրվել էին Տնտեսական դատարանի կողմից և տրվել էին դրանց մերժման հիմնավորումներ, որոնք առաջին հայացքից կամայական չեն: Ավելին՝ դիմումատու ընկերությունը կարողացել էր վիճարկել համապատասխան մերժումները Վճռաբեկ դատարան ներկայացրած իր բողոքում, որը լրացուցիչ հետազոտել և հաստատել էր Տնտեսական դատարանի կողմից տրված պատճառաբանությունները: Նման պարագայում չի երևում, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքննության երաշխիքների խախտում: Առկա չէ նաև որևէ ապացույց, որ դիմումատու ընկերությունը որևէ այլ կերպ իր հակառակորդի նկատմամբ էականորեն վատթար դիրքում է դրվել:

93. Այստեղից հետևում է, որ դիմումի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն:

IV. IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁՈՒԳԱԿՑՄԱՄԲ

94. Վերջապես, դիմումատու ընկերությունը բողոքում էր, որ ՀՈԱՀ-ի և ներպետական դատարանների որոշումները քաղաքական

ենթատեքստ ունեին: Այն պնդում էր, որ ՀՌԱՀ-ն անկախ և անկողմնակալ մարմին չէր, քանի որ վերջինիս բոլոր ինը անդամները նշանակվել էին Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից: Դիմումատու ընկերությունը հիմնվում էր Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վրա 6-րդ և 10-րդ հոդվածների զուգակցմամբ, որը համապատասխան մասում սահմանում է, որ.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից ու ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ ...քաղաքական կամ այլ համոզմունքից...»:

Ընդունելիությունը

95. Դատարանը նշում է, որ դիմումատու ընկերությունը քաղաքական հայացքներից ելնող ենթադրյալ խտրականության և ՀՌԱՀ-ի անդամների նշանակման եղանակի հարցը չի բարձրացրել ներպետական դատարաններ դիմելիս:

96. Այստեղից հետևում է, որ դիմումատու ընկերությունը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան և դիմումի այս մասը ենթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն:

97. Ինչ վերաբերում է դատավարությանը, ապա հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը, Դատարանը նմանապես գտնում է, որ չկան ապացույցներ, որոնք կհիմնավորելին դիմումատու ընկերության այն պնդումը, որ ներպետական դատարանները գտնվել են քաղաքական ազդեցության տակ իր դիմումների առնչությամբ որոշում կայացնելիս:

98. Այստեղից հետևում է, որ դիմումի այս մասն ակնհայտորեն անհիմն է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ մասի:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Նյութական վնասը

2. Դիմումատու ընկերությունն ընդհանուր առմամբ պահանջել է 1,357,828 Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) դոլար (մոտ 1,050,137 եվրո) որպես նյութական վնասի փոխհատուցում, ներառյալ՝ գովազդային գործունեությունից և ներդրումներից ակնկալվող բաց թողնված եկամուտը, չօգտագործված սարքավորումների կորուստը և պայմանագրերից չստացված եկամուտը, ինչի առնչությամբ դիմումատու ընկերությունը նշել է, որ 2001թ. նոյեմբերի 23-ին ՀՌ-ԱՀ-ի կողմից 37-րդ կապուղով անորոշ ժամանակով հեռարձակման թույլտվություն ստանալուց հետո վերջինս կնքել է մի շարք պայմանագրեր, որոնք այնուհետև ստիպված է եղել դադարեցնել 37-րդ կապուղիով հեռարձակվելու արտոնագրից զրկվելու պատճառով:

3. Կառավարությունը պնդել է, որ չկա պատճառահետևանքային կապ 10-րդ հոդվածի ենթադրյալ խախտման և նյութական վնասի փոխհատուցման պահանջի միջև: Այս պահանջը բացառապես հիմնված է եղել այն ենթադրության վրա, որ դիմումատու ընկերությունը արտոնագիր կստանար, եթե ՀՌ-ԱՀ-ի որոշումը լիներ պատճառաբանված: Ավելին, պայմանագրերից չստացված եկամուտի մասով դիմումատուի պահանջը դուրս է սույն գանգատի շրջանակներից:

4. Դատարանը գտնում է, որ բաց թողնված եկամուտի մասով պահանջը մտացածին է (տես՝ ի թիվս այլոց, վերոնշյալ *Ինֆորմացիոնսվերեին Լենտիան և այլոք*, պարբ. 46, և վերոնշյալ *Ռ-ադիո «Էյ-Բի-Սի»*, պարբ. 41): Ավելին, առկա չէ պատճառահետևանքային կապ հայտնաբերված խախտման և չօգտագործված սարքավորումների կորստի մասով ենթադրյալ նյութական վնասի միջև: Վերջապես, ինչ վերաբերում է պայմանագրերից չստացված եկամուտի ենթադրյալ կորստին, ապա այս պահանջը դուրս է սույն գանգատի շրջանակներից, քանի որ 37-րդ կապուղու համար հայտարարված մրցույթին կամ մրցույթի ընթացքում կրած որևէ հնարավոր վնասին չի առնչվում: Այս հարցը, ինչպես արդեն վերը նշվել է, Դատարանի կողմից քննության է առնվել դիմումատու ընկերության կողմից ներկայացված և թիվ 37780/02 համարով գրանցված մեկ այլ գանգատի շրջանակներում: Վերոնշյալի հիման վրա Դատարանը մերժում է նյութական վնասի փոխհատուցման պահանջը:

Բ. Ոչ նյութական վնասը

5. Դիմումատու ընկերությունը նաև պահանջել է 50,000 ԱՄՆ դոլար (մոտ 38,670 եվրո) որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Մասնավորապես՝ ՀՌ-ԱՀ-ի կողմից հեռարձակման արտոնագրի տրամադրման պարբերաբար մերժումը, ինչպես նաև պատճառաբանված որոշման տրամադրման մերժումը բացասաբար է

ազդել վերջինիս հեղինակության և բարի համբավի վրա: Ավելին, դիմումատու ընկերության աշխատակիցները և նախագահը Կոնվենցիայի խախտման և ներպետական դատարանների կողմից այդ խախտմանը չանդրադառնալու արդյունքում ունեցել են տազնապի, անելանելիության, հոգեկան տառապանքի, անհանգստության և անորոշության զգացում:

6. Կառավարությունը նշել է, որ խախտման ճանաչման փաստն ինքնին բավարար փոխհատուցում կհանդիսանա: Չկա պատճառահետևանքային կապ ենթադրյալ խախտման և ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջի միջև: Ավելին, անդրադառնալով *Քոմինգերսոլլն ընդդեմ Պորտուգալիայի*, թիվ 35382/97, պարբ. 36, ECHR 2000-IV, և *Անկախություն և Ժողովրդավարություն կուսակցությունն (ÖZDEP) ընդդեմ Թուրքիայի*, թիվ 23885/94, պարբ. 57, ECHR 1999-VIII գործերին, Կառավարությունը պնդել է, որ Դատարանի վճիռները, որոնցով ոչ նյութական վնասի փոխհատուցում է տրամադրվել իրավաբանական անձի տնօրենին և այլ անդամներին վերջիններիս կողմից ունեցած անելանելիության և անորոշության զգացումի համար, կիրառելի չեն սույն գործի շրջանակներում, քանի որ վերաբերում են Կոնվենցիայի այլ հոդվածներին և ունեն տվյալ գործից տարբերվող հանգամանքներ:

7. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է, որպեսզի այն ունենա ոչ նյութական վնասի փոխհատուցում տրամադրելու լիազորություն նաև առևտրային կազմակերպություններին: Նման գործերում պետք է հաշվի առնել ընկերության հեղինակության, որոշումների պլանավորման անորոշության, ընկերության կառավարման խարխիւման (նման դեպքերի համար գումարի հաշվարկման հստակ մեթոդ գոյություն չունի) և վերջապես՝ դեկավար անձնակազմին պատճառված տազնապի և անհանգստության զգացումի հարցերը (տես՝ *mutatis mutandis*, վերոնշյալ *Քոմինգերսոլլն ընդդեմ Պորտուգալիայի*, պարբ. 35): Դատարանը գտնում է, որ ՀՌ-ԱՀ-ի թերացումը յուրաքանչյուր դեպքում 10-րդ հոդվածին համապատասխան արտոնագրման չափանիշներ կիրառելու հարցում՝ մասնավորապես վերջինիս կողմից դիմումատու ընկերության հայտերի պարբերաբար մերժումը չպատճառաբանելը պետք է որ ընկերության դեկավար անձնակազմին պատճառած լինել անելանելիության և անորոշության զգացում, որը չի կարող փոխհատուցվել սոսկ խախտման ճանաչմամբ (տես՝ *mutatis mutandis*, նույն տեղում, պարբ. 36, և վերևում հիշատակված, *Ազատություն և Ժողովրդավարություն կուսակցություն (ÖZDEP)*, պարբ. 57): Հետևաբար Դատարանը, գործելով արդարացիության սկզբունքին համապատասխան, որոշում է դիմումատու ընկերությանը տրամադրել 20,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Գ. Ծախսեր և ծախքեր

8. Դիմումատու ընկերությունը նաև պահանջել է 11,959 ԱՄՆ դոլար (մոտ 9,250 եվրո) և 10,736.48 ֆունտ ստեռլինգ (ՄԲՖ) (մոտ 16,050 եվրո) որպես Դատարանում կատարված ծախսերի և ծախքերի փոխհատուցում: Այդ պահանջները ներառում են.

(ա) 9,775 ԱՄՆ դոլար՝ որպես իր երկու ներպետական ներկայացուցիչներին վճարված գումար (42.5 և 51 ժամ կատարած աշխատանքի դիմաց՝ համապատասխանաբար 50 և 150 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ժամի դիմաց),

(բ) 2,1484 ԱՄՆ դոլար՝ որպես թարգմանչական ծախսեր,

(գ) 9,112.48 ՄԲՖ՝ որպես Միացյալ Թագավորությունում գործող չորս իրավաբաններին վճարված գումար, ներառյալ KHRP-ի երեք իրավաբաններին և մեկ փաստաբանի վճարված գումար (ընդհանուր առմամբ 32 և 28 ժամ կատարած աշխատանքի դիմաց՝ մեկ ժամը 150 ՄԲՖ հաշվարկով),

(դ) 260 ՄԲՖ՝ որպես KHRP-ի կողմից կատարված կազմակերպչական ծախսեր, և

(ե) 1,364.00 ՄԲՖ՝ որպես KHRP-ի ներկայացուցիչների՝ Երևան կատարած այցի ճանապարհորդական ծախսեր.

Ի հավաստումն իր կողմից ներկայացրած պահանջների դիմումատու ընկերությունը ներկայացրել է ժամավճարը մանրամասնող համապատասխան փաստաթղթեր:

9. Նախ՝ Կառավարությունը պնդել է, որ պահանջվող գումարը առնվազն կեսով չափ պետք է նվազեցվի, քանի որ արդարացի փոխհատուցում պահանջելու իրավունք ունի միայն դիմումատու ընկերությունը, այլ ոչ թե երկրորդ դիմումատուն: Երկրորդ՝ դիմումատու ընկերությունը գործի մեջ ներգրավել է չափազանց մեծ թվով իրավաբաններ, թեև գործն այդչափ բարդ չէր, որպեսզի արդարացներ այդ հանգամանքը: Վերջապես, ներպետական փաստաբանների վճարների հատուցման պահանջը հիմնավորված չէ համապատասխան փաստաթղթերով, քանի որ դիմումատու ընկերությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որը ցույց կտար, որ ներպետական իրավաբանների և դիմումատուի միջև գոյություն ունի իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որով կսահմանվեր մատուցած ծառայությունների համար ենթադրյալ ժամավճարը: Ավելին, ներպետական իրավաբաններին ենթադրաբար տրված ժամավճարը չափազանց բարձր է:

10. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի դիմումատուին տրամադրվում է իր ծախսերի և ծախքերի փոխհատուցում միայն այն դեպքերում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ են: Դատարանը նշում է, որ սույն գործում թարգմանչական ծախսերը հավաստող վճարման անդորրագիր չի ներկայացվել: Ինչ վերաբերում է իրավաբաններին վճարված գումարներին, ապա ոչ

բոլոր ծախսերն են եղել անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ, ներառյալ նաև KHRP-ի իրավաբանների՝ Երևան կատարած այցի ճանապարհորդական ծախսերը, ինչպես նաև օտարերկրյա և ներպետական իրավաբանների կատարած աշխատանքի նկատելի կրկնությունը, ինչն արտացոլված է համապատասխան ժամանակացույցներում: Ավելին, փոխհատուցման գումարը պետք է նվազեցնել նաև այն պատճառաբանությամբ, որ հիմնական գանգատի մի մասը ճանաչվել էր անընդունելի: Դատարանը, կատարելով իր հաշվարկը և գործելով արդարացիության սկզբունքին համապատասխան, որոշում է դիմումատուին տրամադրել 10,000 եվրո որպես կատարված ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով և փոխանցվի Միացյալ Թագավորությունում դիմումատու ընկերության ներկայացուցիչների բանկային հաշվեհամարին:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

11. Դատարանն ընդունելի է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՉԱՅՆ

1. Ընդունելի է *հայտարարում* դիմումատու ընկերության գանգատը՝ կապված Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ և անընդունելի՝ գանգատի մնացյալ մասը,

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

3. *Վճռում է*, որ

(ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի հոդված 44-ի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատու ընկերությանը պետք է վճարի հետևյալ գումարները.

(I) 20,000 (քսան հազար) եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ փոխարկված պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով

(II) 10,000 (տաս հազար) եվրո, գումարած նշված գումարի վրա դիմումատու ընկերության նկատմամբ հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ որպես ծախսերի և

ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով Միացյալ Թագավորությունում ներկայացուցիչների բանկային հաշվին,

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար, գումարած երեք տոկոս:

4. *Մերժում է* դիմումատու ընկերության արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 17-ը հունիսի 2008թ.՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի կանոն 77-ի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ